

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ԱՆՆԱԽՐՆՔԱԳ ԱԶԱԿԳՈՒՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Արցախահայութեան բռնի տեղահանութեան լոյսին տակ, Եւրոպական շարք մը երկիրներու եւ կառոյցներուն համար Հայաստանին գործնական աջակցութիւն ցուցաբերելու հարցը դարձած է առաջնահերթութիւն: Արեւմտեան երկիրները կ'անդրադառնան որ, Լեռնային Ղարաբաղի ու անոր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան գործին մէջ իրենց թերացումը, կրնայ տարածաշրջանը դնել նոր խնդիրներու առջեւ: Գլխաւոր առնչակետն է, Ատրպէյճանի նկրտումները կ'երթան Լեռնային Ղարաբաղէն անդին ու այժմ վտանգի տակ է ժողովրդավար Հայաստանի ինքնիշխանութիւնը եւ հողային ամբողջականութիւնը:

Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Բաթրին Քոլոնան անմիջապէս ժամանելով Երեւան փոխանցեց նախագահ Էմանուէլ Մաքրոնի կեցուածքը որ, Ֆրանսան շատ զգօն պիտի ըլլայ իր բարեկամ երկրի՝ Հայաստանի տարածքային ամբողջականութեան նկատմամբ: Իսկ ամենէն կարեւորը, որուն մասին մինչեւ հիմա հրապարակաւ չէր խօսուած, այն էր թէ, Ֆրանսան իր համաձայնութիւնը տուած է Հայաստանի հետ ապագայ պայմանագրի կնքման մասին, որ հնարաւորութիւն պիտի տայ ռազմասարքեր տրամադրել Հայաստանին, որպէսզի ան կարողանայ ապահովել իր պաշտպանութիւնը:

Ֆրանսացի նախարարի այս յայտարարութիւնը, ինչպէս որ կ'ակնկալուէր, յառաջացուց Ալիեւի զայրոյթը եւ ան յայտարարեց որ, պիտի չմասնակցի Սպանիոյ Կրանատա քաղաքին մէջ նախապէս ծրագրուած հնգակողմ հանդիպումին՝ Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի, Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլցի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի մասնակցութեամբ: Ատրպէյճանի բացակայութեամբ կայացած քառակողմ հանդիպումը վերածուեցաւ Հայաստանին եւ Արցախի ժողովուրդի զօրակցութեան ու Ատրպէյճանի արարքները դատապարտող հանդիպումի: Եւրոպական Խորհուրդի նախագահը, Ֆրանսայի նախագահը եւ Գեր-


## Կրանատայի Քառակողմ Հանդիպման Յայտարարութիւնը Ղարաբաղի Մէջ Տեղի Ունեցածը Կը Բնորոշէ Տեղահանութիւնը

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան, Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլ, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն եւ Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլց կրանատայի մէջ կայացած հանդիպման արդիւնքով ընդունած են, յայտարարութիւն, որուն մէջ Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցածը կը բնորոշուի զանգուածային տեղահանութիւն:

Յայտարարութեան մէջ Եւրոպական Խորհուրդի նախագահը, Ֆրանսայի նախագահը եւ Գերմանիոյ վարչապետը կ'ընդգծեն «իրենց անսասան աջակցութիւնը Հայաստանի անկախութեան, ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ սահմաններու անձեռնմխելիութեան»:

Անոնք նաեւ իրենց աջակցութիւնը յայտնեցին ԵՄ-Հայաստան յարաբերութիւններու ամրապնդման՝ իր բոլոր չափովն իրենց հիմնուած Հայաստանի Հանրապետութեան կարիքներուն վրայ:

«Անոնք համաձայնեցան Հայաստանին յաւելեալ մարդասիրական օգնութիւն տրամադրելու անհրաժեշտութեան շուրջ, քանի որ



Կրանատայի մէջ կայացած քառակողմ հանդիպումը

այն կը բախի Ղարաբաղի հայերու վերջին զանգուածային տեղահանութեան հետեւանքներուն: Անոնք ընդգծեցին, որ այդ փոխադրուածները պէտք է ազատօրէն օգտուին իրենց տուններ եւ իրենց բնակութեան վայրեր վերադառնալու իրաւունքէն՝ առանց որեւէ պայմաններու, միջազգային դիտորդութեան ներքոյ եւ յարգելով իրենց պատ-

մութիւնը, մշակոյթը եւ մարդու իրաւունքները», նշուած է քառակողմ յայտարարութեան մէջ:

«Անոնք հաւատարիմ կը մնան

## Քաթրին Քոլոնան Պաշտպանութեան Նախարարին Յանձնարարած Է Գնահատել Հայաստանին Ռազմական Կարիքները

Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Քաթրին Քոլոնան Պաշտպանութեան Նախարարին Յանձնարարած է գնահատել Հայաստանին Ռազմական Օգնութիւն Յուսուածները:

Նախարար Քոլոնան «France 2» հեռուստատեսութեան հասարակած է, որ Ֆրանսայի Պաշտպանութեան Նախարարութեան ղեկավար Սեպասթիան Լեքորնի յանձնարարած է գնահատել Հայաստանին Ռազմական Օգնութիւն ցուցաբերելու Ֆրանսայի հնարաւորութիւնները:

Ան չէ նշած յստակ ժամկէտները եւ սպառնալիցութեան տեսակները, որոնք Փարիզը կրնայ մատակարարել Երեւանին:

«Մենք երկխօսութիւն կը վարենք Երեւանի հետ՝ գնահատելու համար անոր սպառնալիցութեան կարիքները: Սա նաեւ միջոց է՝ խուսափելու աւելի բարդ իրավիճակէն, որ այս անգամ անկասկած պիտի չունենայ Եւրոպայի կամ առնուազան Ֆրանսայի կողմէ պատժամիջոցներուն», ըսած է Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը:

Անցեալ շաբաթ, Երեւան այցելութեան ընթացքին Նախարարը ըսած էր որ, Ֆրանսան շատ զգօն պիտի ըլլայ որեւէ սպառնալիքի նկատմամբ, որուն նկրտում-



Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Քաթրին Քոլոնան

ներն են Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը: Դուք գիտէք, որ Ֆրանսայի նախագահը շատ յստակ եղած է, Ֆրանսան շատ զգօն պիտի ըլլայ իր բարեկամ երկրի՝ Հայաստանի տարածքային ամբողջականութեան նկատմամբ», այս մասին Արտաքին Գործերու Նախարարութեան մէջ ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ ըսաւ Ֆրանսայի արտաքին գործերու նա-

## Եթէ Ռուս Խաղաղապահները Դուրս Կու գան Լեռնային Ղարաբաղէն, Ուրեմն Պէտք Է Երթան Ռուսաստան. Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Հանրային Հեռուստատեսութեան եթերով յայտարարած է, որ եթէ ռուս խաղաղապահները դուրս կու գան Լեռնային Ղարաբաղէն, ուրեմն պէտք է երթան Ռուսաստան:

«Նրանք Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Դաշնութեան զօրախումբն են», յստակացուցած է վարչապետը:

Անդրադառնալով Կրանատայի մէջ կայացած քառակողմ հանդիպման արդիւնքներուն, Նիկոլ Փաշինեան նշած է. «Շատ կարեւոր արձանագրում է, որ ԵՄ-ում Հայաստանի հետ յարաբերութիւնների խորացման առումով կայ համախոսութիւն»:

Անդրադառնալով մեղադրանքներուն, թէ Հայաստան կը փոխէ ուղղութիւնը եւ կ'երթայ դէպի Արեւմուտք, ՀՀ ղեկավարը ըսաւ. «Մենք ոչ մի վեկտոր չենք փոխում: ԵՄ-ի հետ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան մասին պայմանագիրը 2018-ից առաջ է ստորագրուել եւ վաւերացուել: Մենք դրա մէջ ոչինչ չենք փոխում: Ռուսաստանի հետ յարաբերութիւններուն ինչ կայ, մենք ոչ մի բան չենք չեղարկել: Ոչ մի տեղից դուրս չենք եկել»:



ԼՈՒՐԵՐ

ՈՒԷԼ ԱՆՈՒՆՊ ՄԱՐԴ ՊԷՏՐ ՉԷ ՀԵՏԱԿԱՆՈՒՄ ԱՐԺԱՆԱՆԱՅ, ԵՒ ՈՒԷԼ ՄԵՂԱԼՈՐ ՊԷՏՐ ՉԷ ՄՆԱՅ ԱՌԱՆԳ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԼՈՒԹԵԱՆ. ՎԱՐՀԱՅԵՄ



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորած է ՔՅՆՀական Կոմիտեի այցի ընթացքին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորած է ՔՅՆՀական Կոմիտեի նախագահ Արգիշտի Քյառամեանը եւ բոլոր ծառայողները՝ մասնագիտական օրուան առթիւ: Նիկոլ Փաշինյանն նշած է, որ երկրին մէջ նախաքննութեան որակի բարձրացման ուղղութեամբ հետեւողական աշխատանքներ կ'իրականացուին, եւ այդ աշխատանքը կու տայ իր արդիւնքը: Վարչապետին խօսքով՝ կառավարութեան որդեգրած քաղաքականութիւնը հետեւեալ տրամաբանութիւնը ունի՝ ոեւէ անմեղ մարդ պէտք չէ քրեական հետապնդման արժանանայ, եւ ոեւէ մեղաւոր պէտք չէ մնայ առանց պատասխանատուութեան: «Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ մենք մեր բոլոր խնդիրներն լուծումները պէտք է տեսնենք մեր երկրի, մեր պետութեան եւ հիմնարկների կայացման աստիճանի մէջ: Որովհետեւ այս-

տեղ ինչի մասին էլ խօսենք, մեր երկրում առկայ ինչ խնդրի մասին էլ խօսենք, ի վերջոյ, յանգելու ենք որեւէ հաստատութեան խնդրի եւ դրանից բխող պատճառահետեւանքային կապերի: Վարչապետը ընդգծած է, որ արդարադատութեան ոլորտի եւ միւս բարեփոխումները ունին առաջնային նշանակութիւն, որովհետեւ բոլոր, ընդ որում՝ անվտանգային խնդիրները, պէտք է կարենալ լուծել համարժէք բարեփոխումներու օրակարգով: «Եւ նորից ուզում եմ յիշեցնել, յորդորել եւ խնդրել բոլորիդ, որ երկու ուղղութիւն չափազանց կարեւոր են՝ ոչ մի անմեղ մարդ չպէտք է ենթարկուի հետապնդման եւ ոչ մի մեղաւոր չպէտք է խուսափի պատասխանատուութիւնից: Այս բանաձեւի հետեւողական կատարումն է այսօր, վաղը եւ ընդմիջտ ամենամեծ ծառայութիւնը հայրենիքի՝ Հայաստանի»:

Հայաստանն Ու Վրաստանը՝ Ամենաարագ Աճող Տնտեսութիւններ Ունեցող Երկիրներ



2022 թուականին Հայաստանն ու Վրաստանը երկրորդ անգամ անընդմէջ կը ճանչցուին ամենաարագ աճող տնտեսութիւններ ունեցող երկիրները եւրոպական եւ կեդրոնական ասիական երկիրներու շարքին: Այս մասին կը վկայէ Համաշխարհային դրամատան՝ Եւրոպայի եւ կեդրոնական Ասիոյ տարածաշրջանի տնտեսական զեկոյցը: Զեկոյցին մէջ կը ներկայացնէ տարածաշրջանին եւ անոր մէջ ընդգրկուած երկիրներու տնտեսական աճի կանխատեսումները, այդ շարքին՝ Վրաստանը: Զեկոյցին համաձայն, 2023 թուականին Վրաստանի տնտեսական աճի կանխատեսումները ճշգրտուած են մինչեւ

5,9 տոկոս, հետեւաբար՝ Վրաստանի մէջ տնտեսական աճ կը նախատեսուի: Զեկոյցին մէջ կը նշուի, որ Վրաստանը 2023 թուականի երկրորդ եռամսեակին պահպանած է արագ տնտեսական աճի իր թափը, իսկ արտադրութիւնը աճած է 7,5 տոկոսով՝ անցեալ տարուան երկրորդ եռամսեակին համեմատ: «Արտահանումը զգալիորէն կ'աճի Հարաւային Կովկասի մէջ, եւ ինքնաշարժներու վերաարտահանումը յանգեցուցած է Վրաստանի մէջ արտահանման երկնիչ աճի: Վերջին ամիսներուն փոխանցումներու ներհոսքը նուազած է, սակայն մնացած է կայուն», նշուած է զեկոյցին մէջ:

Տիրան Ալիւեան Ընտրուեցաւ Երեւանի Քաղաքապետ

Ձայների 32 կողմ, 5 դէմ յարաբերակցութեամբ իշխող կուսակցութեան թեկնածու Տիրան Ալիւեան ընտրուեցաւ Երեւանի քաղաքապետ: «Քաղաքացիների գերակշիռ մեծամասնութիւնն իր ձայնը տուել է յեղափոխութեանը, ուստի ցանկացած փորձ՝ այդ ձայները կիսելու ապապետական, փտած, հակաժողովրդավարական ուժերի հետ, կը նշանակի քաղաքացիների տուած քուէի բռնազաւթում հակաժողովրդավարական ուժերի կողմից», յայտնեց Տիրան Ալիւեան: Քաղաքապետ ընտրուելու համար Ալիւեանին 3 ձայն կը պակսէր, այդ ալ Արամ Սարգսեանի հիմնադրած «Հանրապետութիւն» կուսակցութիւնը լրացուց: Ընդդիմադիր ուժը իշխանութեան հետ դաշինքի յուշագիր ստորագրեց: Ալիւեանը յայտնեց, որ միասին պիտի կառավարեն քաղաքը: «Համատեղ յուշագիրը քաղաքական առեւտուր չէ», հարցուցին լրագրողները՝ յիշեցնելով, որ «Հանրապետութիւն»-ը ընտրարշաւի ժամանակ կը քննադատէր իշխանութիւնները: «Ամէն ինչ եղել է հանրային, բոլորը բացայայտ իրար հետ այդ առեւտուրը իրականացրել են, մենք ասել ենք, որ մերժում ենք այդ ձեւը, մենք մերժում ենք այլ ուղղուածութիւններ, այլ գաղափարական հենք ունեցող խմբակցութիւնների հետ որեւէ կերպ դաշինք կազմել», հարցումին արձագանգեց նորընտիր քաղաքապետը: «Ընտրութիւններում նուազագոյնը հինգ քաղաքական ուժ մասնակցում էին հիւսիսային դրամադուրիով եւ բրեմլեան կառավարումով: Թոյլ չենք տալիս, որպէսզի Երեւանը, Հայաստանը ցնցուի եւ ենթարկուի նահանգ



Երեւանի նորընտիր քաղաքապետ՝ Տիրան Ալիւեան

դառնալու վտանգին», իր հերթին ըսաւ Արտակ Զէյնալեանը: «Հանրապետութիւն»-ը ունեցած բոլոր՝ 8 ձայները տուաւ Ալիւեանին: «Հանրային Ձայն» կուսակցութեան 7 անդամներէն քուէարկութեան մասնակցած են 5-ը՝ 5-ն ալ դէմ քուէարկած են: Բացականերէն Արտակ Գալստեանը անագատութեան մէջ է, Տիրան Ուրիխանեանը՝ արտերկրի մէջ է: «Ընդունում ենք երեւանցիներից ստացած քուէները, ընդունում ենք այն արդիւնքները, որոնք որ դրանցուել են Սեպտեմբերի 17-ի ընտրութիւնների արդիւնքներով, եւ շարժում ենք առաջ», նշեց Ալիւեան: «Ամբողջ քարոզարշաւի ընթացքում տարբեր քաղաքական ուժեր, նաեւ՝ լրատուամիջոցներ, էս կեղծ թեզերը տարածել են ընթացքում: Ես ուզում եմ՝ գայ այն օրը, որ մենք բոլորս էլ ընտրակեղծիքի, այդ վարչական միջոցի եւ բոլոր նմանատիպ հակաժողովրդավարական լուծումների էջը փակենք վերջնականապէս», յայտնեց Տիրան Ալիւեան:

Յունուար-Օգոստոսին Նախորդ Երկու Տարիներու Համեմատ Աւելի Շատ Մարդ Ծնած Է Եւ Աւելի Քիչ Մարդ Մահացած Է

Վիճակագրական կոմիտէն ամփոփած է 2023թ. Յունուար-Օգոստոս ամիսներու կտրուածքով հիմնական ժողովրդագրական ցուցանիշերը: 2023թ. Յունուար-Օգոստոսին, ըստ ՎԿ հրապարակուած տեղեկանքին, կենսունակութեան զործակիցը՝ ծնածներու եւ մահացածներու յարաբերակցութիւնը, կազմած է 143.6%, նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանին արձանագրուած 124.6%-ի համեմատ: 2023թ. հաշուետու ժամանակաշրջանին ծնած է 23 հազար 551 մարդ: Համեմատութեան համար նշենք, որ 2022-ի նոյն ժամանակահատուածին ծնած է 23 հազար 478, իսկ 2021-ին՝ 22 հազար 986 մարդ: Յունուար-Օգոստոսին մահացած է աւելի քիչ մարդ՝ 16 հազար 401, քան նախորդ երկու տարիներու վերոյիշեալ ամիսներուն՝ 2022-ին մահացածներու թիւը 18 հազար 441 մարդ էր, 2021-ին՝ 20 հազար 841 մարդ: Բնական յաւելածը հաշուետու ժամանակաշրջանին 2021-ի համեմատ կազմած է 2,7 անգամ, 2022-ի համեմատ՝ 1,6 անգամ: Յունուար-Օգոստոսին ամուսնութեան աւելի քիչ զէպք ար-

ձանագրուած է՝ 10 հազար 691, քան նախորդ տարիներուն: Մասնաւորապէս 2022-ի նոյն ժամանակահատուածին արձանագրուած է ամուսնութեան 10 հազար 880, իսկ 2021-ին՝ 11 հազար 262 զէպք: 2022-ի համեմատ նուազած է ամուսնալուծութիւններուն թիւը՝ 2.949 զէպք՝ 2022-ի 2.981 զէպքի դիմաց: 2021-ին, նշենք, արձանագրուած էր ամուսնալուծութեան 2.891 զէպք: Նշենք, որ հաշուետու ժամանակաշրջանին նախորդ տարուան համեմատ արձանագրուած է նորագոյացութիւններէն մահացութեան 7-ով պակաս՝ 3.430 զէպք: Յունուար-Օգոստոսին արձանագրուած է Քովիտի հետեւանքով մահացութեան մրցանշային ցած ցուցանիշ՝ 37 զէպք՝ նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանին արձանագրուած 726 զէպքի դիմաց: Արեւան շրջանառութեան համակարգի հիւանդութիւններէն մահուան զէպքերը նոյնպէս նախորդ տարուան համեմատ նուազած են՝ հաշուետու ժամանակաշրջանին արձանագրուած է 8 հազար 730 զէպք՝ նախորդ տարուան 10 հազար 44 զէպքի դիմաց:

ԼՈՒՐԵՐ

Ուրսուլա Վոն Եր Լայեն. «ԵՄ-ն ԱՄՆ-ի Հետ Միասին Պիտի Կազմակերպել Համատեղ Հանդիպում Հայաստանին Աջակցելու Համար»

Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ուրսուլա Վոն տեր Լայենն Նախօրէին Պորտուգալի մէջ (Ֆրանսա) Եւրոպական համալսարանին մէջ ելոյթ ունեցած է երիտասարդական հաւաքին ընթացքին, որ կազմակերպած է «Վերածնունդ» կուսակցութիւնը: Այդ քաղաքական կառույցին պատուաւոր նախագահը Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մաքրոնն է:

Ի շարք այլ հարցերու, Ուրսուլա Վոն տեր Լայենը խօսած է Լեւնային Ղարաբաղի վրայ Սեպտեմբեր 19-20-ին Ատրպէյճանի կատարած յարձակման եւ անոր յաջորդած հայերու զանգուածային արտագաղթին մասին:

«Ես կ'ուզեի ձեզի հետ կիսուելի Հայաստանի եւ Լեւնային Ղարաբաղի մէջ տիրող իրավիճակին վերաբերեալ իմ համոզմունքներով: Կրանատայի մէջ մեր հանդիպման ժամանակ ես կրցայ Հայաստանի վարչապետ [Նիկոլ] Փաշինեանին վերահաստատել իմ ամբողջ աջակցութիւնս Հայաստանին: Ես խստօրէն կը դատապարտեմ Ատրպէյճանի ռազմական գործողութիւնը, որ յանգեցուց Լեւնային Ղարաբաղի տարածաշրջանէն աւելի քան 100 հազար հայերու արտագաղթին: Ես կը վերահաստատեմ իմ բացարձակ աջակցութիւնս Հայաստանի տարածքային ամբողջականութեան՝ ՄԱԿ-ի սկզբունքներուն համապատասխան», ըստ է Եւրոպական Յանձնաժողովի ղեկավարը:

Անոր փոխանցմամբ, Եւրոմիութեան անմիջական առաջնահերթութիւնն է օգնել Հայաստանին՝ ընդունել տեղահանուածները:

Միշտի Հետ Զրոյցին Ալիե Բողոքած Ե Եւրոխորհրդարանի Ու Ֆրանսայի Մասին

Պրիւսիան հանդիպման նախապատրաստական աշխատանքներու շրջանակներուն մէջ Եւրոմիութեան Խորհուրդի նախագահ Շարլ Միշլէ հեռախօսազրոյց ունեցած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

X-ի իր հշով Միշլէ զրած է, որ Ալիեւին փոխանցած է ԵՄ հաւատարմութիւնը հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին:

«Կրկնեցի տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան փոխադարձ յարգանքի եւ սահմաններու սահմանազատման ուղղութեամբ յառաջընթացի անհրաժեշտութիւնը: Ընդգծեցի նաեւ Ղարաբաղի հայերուն անվտանգութիւնն ու իրաւունքները երկարաժամկէտ հեռանկարով ապահովելու անհրաժեշտութիւնը», զրած է Միշլէ:

Ատրպէյճանական «Turan» գործակալութիւնը, վկայակոչելով Ատրպէյճանի նախագահին գրասենեակը, կը հաղորդէ, որ հեռախօսազրոյցի ընթացքին Ալիեւ անդրադարձած է Եւրոխորհրդարանի ընդունած բանաձեւին, զայն համարելով՝ «հակատրպէյճանական»՝ շեշտելով, որ անոր մէջ կատար-



Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ուրսուլա Վոն Լայեն

եւ աջակցել հայկական պետութեան այս փորձութեան մէջ: Եւրոմիութիւնը պիտի կրկնապատկէ անյապաղ մարդասիրական օգնութիւնը եւ պիտի տրամադրէ ֆինանսական աջակցութիւն Հայաստանին:

Բացի անկէ, ըստ Ուրսուլա Վոն տեր Լայենի, Եւրոմիութիւնը Միացեալ Նահանգներուն հետ միասին պիտի կազմակերպէ համատեղ հանդիպում Հայաստանին աջակցելու համար:

«Սա առաջին քայլն է՝ ամբարանդելու մեր երկկողմ յարաբերութիւնները Հայաստանի հետ, քանի որ Եւրոպան եւ Հայաստանը ունին երկար ու հարուստ ընդհանուր պատմութիւն, եւ եկած է ժամանակը նոր գլոբլ բանալու այդ ընդհանուր պատմութեան մէջ», ըսած է Եւրոպական Յանձնաժողովի նախագահը:

ուած պնդումները «անընդունելի» են եւ «չեն ծառայեր տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ապահովման»:

Ինչ կը վերաբերի Կրանատայի մէջ ընդունուած քառակողմ յայտարարութեան, ըստ «Turan»-ի, ընդգծելով, որ Ատրպէյճանը չէ մասնակցած անոր՝ Ալիեւ ըսած է, որ հետեւաբար այդ «սխալ մօտեցում է»:

Ատրպէյճանի նախագահը միատեսակ չեշտած է, որ Պաքուն չէ մասնակցած այդ հանդիպման՝ «Ֆրանսայի կողմնակալ դիրքորոշման պատճառով»:

Ան նաեւ նշած է, որ Ֆրանսայի կողմէ Հայաստանին գէնք տրամադրելու մօտեցումը կը ծառայէ ոչ թէ խաղաղութեան, այլ՝ նոր հակամարտութեան: «Իսկ եթէ տարածաշրջանին մէջ դարձեալ հակամարտութիւն սկսի, մեղաւորը Ֆրանսան պիտի ըլլայ», ըսած է Ալիեւ:

Ատրպէյճանի նախագահը չի շեշտուցած է 8 գիւղերու մասին՝ շեշտելով, որ «անոնք դեռ կը գտնուին Հայաստանի տիրապետութեան տակ», ապա ընդգծած է «անոնց ազատագրման կարեւորութիւնը»:

Մոսկուան Մտադիր Չէ Քայլեր Ձեռնարկելու Արցախի Նախկին Նախագահները Ազատ Արձակելու Համար



Արցախի նախկին նախագահները

Մոսկուան կրկին կը յայտարարէ, թէ չի պատրաստուել քայլեր ձեռնարկելու Պաքունի կողմէ ձերբակալուած Արցախի նախկին նախագահները եւ միւս պաշտօնեաները ազատ արձակելու համար:

«Անոնք Հայաստանի քաղաքացիներ են կամ՝ մարդիկ, որոնք սեփական կամքով հրաժարած են ռուսական անձնագրէն: Ուստի այդ հարցերը պէտք է լուծուին նախ եւ առաջ Հայաստանի ու Ատրպէյճանի իշխանութիւններուն միջեւ», ըսած է Ռուսիոյ արտաքին գործերու փոխնախարար Միխայիլ Կա-

լուզինը: Ատրպէյճանը ծանր մեղադրանքներ ներկայացուցած է Պաքունի մէջ պահուող Արցախի նախկին ղեկավարներուն ու միւս պաշտօնեաներուն:

Հայաստանի իշխանութիւնները դիմած են Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարան (ՄԻԵԴ)՝ պահանջելով պարտաւորեցնել Ատրպէյճանին ազատ արձակել չճանչցուած Լեւնային Ղարաբաղի Հանրապետութեան կալանաւորուած նախկին եւ ներկայիս ղեկավարները:

Ռուս Խաղաղապահները Պատրաստ Են Նպաստելու Խաղաղութեան Հարաւային Կովկասի Մէջ. Լաւրով

«Ռուսաստանը համաշխարհային քաղաքականութեան մէջ» կայքին վրայ հրատարակուած է Ռուսաստանի արտաքին գործերու նախարարին ծաւալուն յօդուածը: Յօդուածին մէջ Սերկէյ Լաւրով քանի մը տողով անդրադարձած է նաեւ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններուն:

Ան նշած է, որ այժմ Պրիւքսէլը, ելլելով իր աշխարհաքաղաքական յաւակնութիւններէն, Ուաշինկթընի հետ միասին, իր «միջնորդական ծառայութիւնները» կը պարտադրէ Ատրպէյճանին եւ Հայաստանին՝ «ապակայունացում բերելով Հարաւային Կովկասի մէջ»:

«Այժմ, երբ Երեւանի եւ Պաքունի ղեկավարները կարգաւորած են երկու երկիրներու ինքն-իշխանութեան փոխադարձ ճանաչման հարցը, եկած է խաղաղ կեանքի հաստատման եւ վստահութեան ամրապնդման ժամանակը: Ռուսական խաղաղապահ զօրախումբը պատրաստ է ամէն կերպ նպաստելու անոր»:

Մօտ 2000 անձնակազմով խաղաղապահ զօրախումբը Լեւնային Ղարաբաղի մէջ տեղակայուած է 2020 թուականին՝ 44-օրեայ պատերազմէն անմիջապէս յետոյ՝ հինգ տարի ժամկէտով, որ կը լրանայ 2025-ին:

Սակայն Սեպտեմբեր 19-ի ռազմական գործողութիւններէն յետոյ, երբ 100-աւոր արցախցիներ լքեցին Լեւնային Ղարաբաղը, խաղաղապահներու ճակատագրին մասին տարբեր մեկնաբանութիւններ կը հնչեն: Օրերս Պետտումայի պատգամաւոր, ԱՊՀ գործերով յանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Քոնստանտին Զաթուրինը յայտնած էր, որ «ռուսական խաղաղապահ զօրախումբը այլեւս ոեւէ մէկը չունի պաշտպանելու, ինչ որ հարուած է



Ռուսաստանի ԱԳ նախարար Սերկէյ Լաւրով

տարածաշրջանին մէջ ռուսական դիրքերուն»: Իսկ Ռուսաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան ներկայացուցիչ Մարիա Զախարովան ակնարկած էր, որ խաղաղապահները հեռանալու մտադրութիւն չունին, իսկ հարցը պիտի քննարկուի Պաքունի հետ:

Ռուսական պետական «ԹԱՍՍ» գործակալութիւնը Հոկտեմբեր 7-ին հաղորդեց, որ Ռուսաստանի Պաշտպանութեան Նախարարութեան պատուիրակութիւնը կ'այցելէ Երեւան՝ քննարկելու Լեւնային Ղարաբաղէն ռուսական խաղաղապահ զօրախումբի դուրսբերման ժամկէտները: Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան, սակայն, «Ազատութեան» ըսին՝ այդպիսի պատուիրակութեան այցի վերաբերեալ տեղեկութիւն չունին: Նախօրէին ալ Ռուսաստանի Արտաքին գործերու նախարարի՝ ԱՊՀ հարցերով տեղակալ Միխայիլ Կալուզինը յայտնեց, որ խաղաղապահներուն առաքելութիւնը Լեւնային Ղարաբաղի մէջ աւելի քան պահանջուած է:

# Freedom House. Հայաստանի Համացանցը Կը Դատ Ազատ Երկիրներու Շարքին



Freedom House իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրատարակած է համացանցի ազատութեան 2023 թուականի զեկոյցը, որուն համաձայն՝ Հայաստանը կը շարունակէ գտնուիլ «ազատ երկիրներու» ցանկին մէջ:

Ըստ զեկոյցին, «թէեւ առցանց միջավայրը Հայաստանի մէջ կը մնայ բաց, համացանցի ազատութիւնը լուսաբանման ժամանակահատուածին մէջ որոշ չափով նուազած է, ինչ որ մեծաւ մասամբ պայմանաւորուած է 2022 թուականի երկրորդ կէսին հայկական տարածքներ Ատրպէյճանի զօրամիակորուներու ներխուժման հետ կապուած տեղեկատուութեան տարածման սահմանափակումներով, ինչպէս նաեւ հաքերային յարձակումներու աճով», կ'ըստի զեկոյցին մէջ:

Դրական հնգամսանք կը համարուի այն, որ կառավարութիւնը ընդունած է Քրէական օրէնագիրքի նոր տարբերակը, որով ապաքրէականացուցած է նախորդ տարի հաւանութեան արժանացած եւ բազում վէճերու եւ քննադատութեան առիթ դարձած «Ծանր վիրավորանքը»:

Հայաստանը վաստակած է 72 միակոր: Այն կազմուած է հետեւ-

եալ բաղադրիչներէն. մոտքի խոչընդոտ՝ 19, բովանդակութեան սահմանափակում՝ 28, եւ օգտատէրերու իրաւունքներու խախտում՝ 25 միակոր:

Տարածաշրջանին մէջ Հայաստանէն առաջ անցած է 77 միակոր վաստակած Վրաստանը:

Թուրքիան (30 միակոր), Ատրպէյճանը (37 միակոր) եւ Իրանը (11 միակոր) մնացած են «ոչ-ազատ» երկիրներու ցանկին մէջ: Այդ խումբին մէջ է նաեւ 21 միակոր վաստակած Ռուսաստանը: Չեկոյցին մէջ կը նշուի, որ համաշխարհային համացանցին ազատութիւնը 13 տարի անընդմէջ նահանջ կ'արձանագրէ, իրավիճակը վատթարացած է 27 երկիրներու մէջ եւ բարելաւուած՝ 22-ի մէջ:

Չեկոյցին մէջ կ'ըսուի, որ արհեստական բանականութեան արհեստագիտութիւնը կրնայ նպաստել առցանց ապատեղեկատուութեան տարածման:

Թեքնիքային զարգացած մեծատիրական կառավարութիւնները արհեստական բանականութեան «ՉաթԿոթի» արհեստագիտութիւններով փորձած են ուժեղացնել գրաքննութեան համակարգերը:

## Կրանատայի Քառակողմ Հանդիպման

Շարունակուած էջ 1-էն

Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած բոլոր ջանքերուն՝ հիմնուած Հայաստանի (29 հազար 800 քառ. քմ) եւ Ատրպէյճանի (86 հազար 600 քառ. քմ) ինքնիշխանութեան, սահմաններու անձեռնմխելիութեան եւ տարածքային ամբողջականութեան փոխադարձ ճանաչման վրայ, ինչպէս նշուած է նախագահ Միշէլի յայտարարութեան մէջ: 2023 թուականի Մայիս 14-ին եւ Յուլիս 15-ին անոնք կոչ ըրած են խստօրէն պահպանել ուժի եւ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը: Անոնք ընդգծած են սահմանագատման ուղղութեամբ աշխատելու հրատապ անհրաժեշտութիւնը՝ հիմնուելով ԽՍՀՄ Գլխաւոր շտաբի ամենավերջին քարտէզներուն վրայ, որոնք տրամադրուած են կողմերուն եւ պէտք է հիմք հանդիսանան նաեւ ուժերուն միջեւ հեռակարգութիւն պահպանելու, խաղաղութեան պայմանագիրը վերջնական տեսքի բերելու եւ մարդասիրական բոլոր խնդիրներու լուծման համար», ըսուած է յայտարարութեան մէջ:

«Անոնք կոչ ըրին աւելի մեծ տարածաշրջանային համագործակցութեան եւ բոլոր սահմաններու, այդ շարքին՝ Հայաստանի եւ Թուրք-

իոյ միջեւ սահմաններու բացման, ինչպէս նաեւ տարածաշրջանային կապերու բացման՝ երկիրներու ինքնիշխանութիւնը եւ իրաւասութիւնը լիակատար յարգելուն, ինչպէս նաեւ հաւասարութեան եւ փոխադարձութեան սկզբունքներու հիման վրայ», նշուած է յայտարարութեան մէջ:

«Եւրոպացի առաջնորդները Հայաստանին եւ Ատրպէյճանին կոչ ըրին ազատ արձակելու բոլոր ձերբակալուածները եւ համագործակցելու անհետ կորսուածներու ճակատագրին լուծում տալու եւ ակադեմիայի լուծումը տալու եւ ակադեմիայի լուծումը տալու եւ ակադեմիայի լուծումը տալու: Անոնք կոչ ըրին նախագահի մերժման պատճառը, ըստ աղբիւրներուն, Ֆրանսայի «ապակառուցողական» դիրքորոշումն է, ինչպէս նաեւ այն, որ Փարիզը եւ Պերլինը համաձայն չեն եղած, որ հանդիպման մասնակցի նաեւ Թուրքիոյ նախագահը:

# Հայաստանը Քայլեր Կը Ձեռնարկէ Երկրին Պաշտպանունակութիւնը Բարձրացնելու Ուղղութեամբ. Նախագահ Վ. Խաչատուրեան

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեան «France 2» հեռուստաալիքին տուած հարցազրոյցին ընթացքին անդրադարձած է ներկայիս Հայաստանի եւ տարածաշրջանին մէջ առկայ իրադրութեան ու Ատրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի մէջ սանձազերծուած ռազմական գործողութիւններուն հետեւանքով բռնի տեղահանուածներու խնդիրներուն:

Նախագահը շեշտած է, որ Ատրպէյճանի կողմէ աւելի քան 9 ամիս տեւած շրջափակման եւ անոր յաջորդած՝ Սեպտեմբեր 19-20-ին լայնածաւալ ռազմական ուժի կիրառման հետեւանքով աւելի քան հարիւր հազար հայեր հարկադրուած եղած են ընդամէնը օրերու ընթացքին տեղափոխուելու Հայաստան:

Նախագահը անդրադարձած է նաեւ վերջին ամիսներուն Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակի հանգուցալուծման նպատակով միջազգային տարբեր կառույցներու նախաձեռնութիւններուն եւ նշած, որ չնայած գնահատելի են մասնաւորապէս Ֆրանսայի եւ տարբեր հեղինակաւոր կառույցներու ջանքերը խնդրի խաղաղ ճանապարհով լուծման եւ ելքեր գտնելու ուղղութեամբ, այնուամենայնիւ անոնք բաւարար չեն եղած ինչպէս Լաչինի մարդասիրական միջանցքը ապաշրջափակելու, այնպէս ալ Ատրպէյճանը զսպելու եւ ուժի կիրառումը բացառելու համար:

«Այստեղ պէտք է հասկանալ մէկ այլ, առաւել լայն երեւոյթ, խօսքը չի վերաբերում միայն Լեռնային Ղարաբաղին, այլեւ աշխարհի ցանկացած կէտում ինչպէս ենք մենք վերաբերուելու նմանօրինակ հիմնախնդիրներին, ինչ լծակներ կան նման զարգացումները կասեցնելու համար, արդեօք մենք պէտք է սպասենք աղէտալի իրադարձութիւնները տեղի ունենան, յետոյ նոր միայն փաստենք գոհերի, արտագաղթողների, ունեզրկուածների ու բռնի տեղահանուածների առկայութիւնը, սա խնդիր է որը վերաբերում է ոչ միայն Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին, այլեւ աշխարհի ցանկացած բնակավայրում ապրող մարդուն», նշած է նախագահը:

Անդրադառնալով Հայաստանի եւ Ֆրանսայի միջեւ ռազմական



ՀՀ Նախագահ Վահագն Խաչատուրեան

համագործակցութեան հնարաւորութեան, Վահագն Խաչատուրեան նշած է, որ 2022 թուականի Սեպտեմբեր 11-12-ին Ատրպէյճանի կողմէ Հայաստանի ինքնիշխան տարածքին նկատմամբ ռազմական յարձակումը պարզ դարձուց, որ առկայ անվտանգային համակարգերը բաւարար չեն Հայաստանի տարածքային ամբողջականութեան լիարժէք պաշտպանութեան համար, ուստի Հայաստանը քայլեր կը ձեռնարկէ երկրին պաշտպանութեան թիրախները բարձրացնելու ուղղութեամբ գործընկերներու՝ ընդ որում Ֆրանսայի հետ յարաբերութիւնները եւ նոր կապեր ստեղծելով: Նախագահը միեւնոյն ժամանակ ընդգծած է, որ ռազմական ոլորտին մէջ Ֆրանսայի եւ այլ երկիրներու հետ համագործակցութիւնը ուղղուած չէ որեւէ երրորդ երկրի դէմ եւ միայն պաշտպանական նպատակ ունի: Ինչ կը վերաբերէ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններուն, նախագահը ըսած է. «Մեր հիմնական նպատակն Ատրպէյճանի հետ խաղաղ ապրելու խնդրի լուծումն է, մենք տարածաշրջանում երկարաժամկէտ ու կայուն խաղաղութեան հաստատման կողմնակից ենք, մեր քաղաքականութիւնը միտուած է դրան եւ մեր միջազգային գործընկերներից մենք ակնկալում ենք աջակցութիւն հէնց այս հարցում, մենք ցանկանում ենք խաղաղ ապրել մեր երկրում եւ հարեւանների հետ խնդիրները հարթել խաղաղ գործիքակազմերով եւ զարգացնել բարիդրացիական յարաբերութիւնները»:

## Հայաստանին Ռազմական Կարիքները

Շարունակուած էջ 1-էն

խարար Քաթրին Քոլոննան:

Ան նշեց, որ այդ մասին խօսած են ՀՀ վարչապետին հետ եւ ուղիղ մէկ տարի առաջ Ֆրանսայի նախագահը Փրակի մէջ հանդիպում ունեցած է վարչապետ Փաշինեանի եւ նախագահ Ալիեւի հետ եւ անոր արդիւնքը, կարելի է ըսել, հիմք ծառայած է իրենց հետագայ ջանքերուն համար:

«Մենք խօսեցանք նաեւ պաշտպանութեան մասին: Կը փափաքէի հանրայնօրէն ըսել, որ Ֆրանսան իր համաձայնութիւնը տուած է Հայաստանի հետ ապագայ պայմանագրի կնքման համար, որ հնարա-

ւորութիւն պիտի տայ ռազմասարք տրամադրել Հայաստանին, որպէսզի Հայաստանը կարենայ իր պաշտպանութիւնը ապահովել, կը կարծեմ հասկնալի է, որ այժմ չեն կրնար աւելի մանրամասնել այս հարցը», ըսաւ Քաթրին Քոլոննան:

Հարցումին, թէ արդեօք Ֆրանսայի համար Հայաստանի հետ ռազմական համագործակցութեան հարցով կարեւոր է, որ Հայաստանը դադարեցնէ ՀԱՊԿ-ի հետ ռազմական համագործակցութիւնը, նախարարը, ըստ էութեան, ըսաւ, որ աւելին չի կրնար ըսել, քան ըսած է: Իսկ Արարատ Միրզոյեանը յաւելեց, որ իրենց գործընկերները ՀԱՊԿ-էն դուրս գալու պահանջ իրենց առջեւ չեն դրած:



## France Ready to Deliver Weapons to Armenia to Protect Its Territorial Integrity

YEREVAN -- France is ready to deliver weapons to Armenia to help the South Caucasus state counter threats to its territorial integrity, French Foreign Minister Catherine Colonna said during a visit to Yerevan late on Tuesday.

"France has given its agreement to the conclusion of future contracts with Armenia which will allow the delivery of military equipment to Armenia so that it can ensure its defense," Colonna told a joint news conference with her Armenian counterpart Ararat Mirzoyan.

She declined to shed light on those contracts, saying only "there are things that were already agreed between Armenia and France and that are in progress."

The French government has condemned Azerbaijan's September 19-20 military offensive in Nagorno-Karabakh that paved the way for the restoration of Azerbaijani control over the region and displaced its virtually entire ethnic Armenian population. President Emmanuel Macron suggested last week that Baku might now attack Armenia as well.

French Defense Minister Sebastien Lecornu said afterwards that the sovereignty and territorial integrity of Armenia are an "absolute objective for us." Lecornu did not rule out arms supplies or other military aid to Armenia, saying that Paris is already examining Yerevan's defense "needs."

Speaking after talks with Mirzoyan and Prime Minister Nikol




Pashinyan, Colonna noted that Azerbaijan has "continuously armed itself to take action," using its oil revenues and Turkey's military assistance.

She said Paris has also proposed that the European Union expand its monitoring mission along Armenia's border with Azerbaijan and help Yerevan from a special fund designed to boost EU partners' defense capacity. Armenian parliament speaker Alen Simonian revealed in July that the Armenian government requested "technical assistance" from the European Peace Facility (EPF) but was rebuffed by Brussels.

In related development, Azerbaijan planned and organized the

Continued on page 2

## European Leaders Voice Unwavering Support for Armenia's Sovereignty and Territorial Integrity



GRANADA — The leaders of the European Union and its key member states, France and Germany, expressed strong support for Armenia's territorial integrity and promised more aid to refugees from Nagorno-Karabakh when they met with Prime Minister Nikol Pashinyan on Thursday.

Azerbaijani President Ilham Aliyev was also due to attend the meeting held on the sidelines of a European Union summit in the Spanish city of Granada. But he withdrew at the last minute, citing pro-Armenian statements made by French leaders and the rejection of his demands that Turkish President Recep Tayyip Erdogan be allowed to join the talks.

A joint statement issued after the Granada talks said Michel, French President Emmanuel Macron and German Chancellor Olaf Scholz "underlined their unwavering support to the independence, sover-

eignty, territorial integrity and inviolability of the borders of Armenia."

"They also expressed their support to the strengthening of EU-Armenia relations, in all its dimensions, based on the needs of the Republic of Armenia. They agreed on the need to provide additional humanitarian assistance to Armenia as it faces the consequences of the recent mass displacement of Karabakh Armenians," added the statement.

They stressed that these refugees must be free to exercise their right to return to their homes and their places of living, without any conditions, with international monitoring, and with due respect for their history, culture and for human rights.

The EU allocated 5.2 million euros (\$5.5 million) in humanitarian

Continued on page 4

## Armenia Fund USA Kicks Off the "Artsakh Refugee Initiative"

This Marks the Next Wave of Assistance Following Initial \$5 Million Allocated to the Effort

LOS ANGELES – Following the announcement of \$5 million allocated for the immediate aid to the forcibly displaced Armenian population of Artsakh, Armenia Fund USA is today launching the "Artsakh Refugee Initiative: Restoring Hope Together." The "Artsakh Refugee Initiative" will continue to provide short-term essentials, such as food, clothing and supplies to refugees, while also working to address mid and long-term goals for those settling in Armenia under immense stress.

With an active team on the ground in Armenia, the "Artsakh Refugee Initiative" will help to meet the urgent needs of the more than 100,000 refugees at this critical time. Armenia Fund resources will be deployed in a phased implementation program as follows:

-Immediate aid

Continue to provide immediate humanitarian aid including food, clothing, essential supplies, temporary shelter and transportation.



-Mid-term support

Plan for and arrange permanent housing and provide educational, medical and mental health resources to individuals, families and children.

-Long-term support

Continue the mid-term support programs augmented with assistance to refugees in finding gainful employment and becoming thriving members of their new communities.

To donate to the "Artsakh Refugee Initiative" and for more information, including progress and updates, please visit [armeniafund.org](http://armeniafund.org) and follow Armenia Fund USA on Facebook and Instagram.

## UN Appealing for \$97 Million to Respond to Urgent Needs of Artsakh Refugees

NEW YORK — The UN and its partners launched on Saturday an emergency response plan to help 136,000 refugees, appealing for \$97 million to respond to urgent needs of those who fled the Karabakh region and their hosts in Armenia.

"We call upon the international community to urgently support refugees and their hosts," said Filippo Grandi, UN High Commissioner for Refugees. "International support is crucial to sustain this welcome and to enable us to respond to immediate needs and to also build upon the resilience of this population."

Following the escalation of hostilities at the end of September, more than 100,000 refugees arrived in Armenia in less than a week.

The UN refugee agency, UNHCR, with UN entities and non-governmental organization (NGO) partners, is appealing for emergency funds to provide urgent humanitarian aid and protection to refugees and those hosting



them in Armenia, in support of the Government-led response.

'Remarkable' local welcome

"Local host communities have generously opened their doors and displayed tremendous solidarity with refugees," Mr. Grandi said. "The local response, led by national authorities,

Continued on page 4

## Tigran Avinyan Elected Mayor of Yerevan

YEREVAN -- Tigran Avinyan, a close ally of Prime Minister Nikol Pashinyan, has been appointed Mayor of Armenia's capital Yerevan.

Meeting Tuesday for the first time since last month's inconclusive municipal elections, councilors voted Tuesday 32-5 to select Avinyan to lead the city for another five years. Avinyan had served as acting mayor since March.

The vote came down along party lines, with all 32 'yes' votes coming from Civil Contract and the Republic Party, its coalition partner, and all 5 'no' votes coming from the Public Voice party, which is linked to Vardan Ghukasyan, a controversial blogger more widely known by the nickname Dog.

The National Progress party, which is led by former Mayor Hayk Marutyan, and the Mother Armenia



bloc, which is supported by ex-President Robert Kocharyan, boycotted the vote but were not able to prevent Avinyan's selection.

It marks a major political victory for Pashinyan, who personally campaigned for Avinyan in the run-up to the vote.

## Prime Minister Nikol Pashinyan to Not Attend CIS Summit

YEREVAN -- Prime Minister Nikol Pashinyan will not attend a summit of fellow leaders of ex-Soviet states that will take place in Kyrgyzstan's capital Bishkek on Friday, it emerged on Tuesday.

According to the office of Kyrgyz President Sadyr Zhaparov, Pashinyan notified him about the decision in a phone call, attributing it to "a number of circumstances." Pashinyan participated in the European Union's October 5 summit in Spain and is due to address the European Parliament next week.

The Armenian government did not issue any statements on the call with Zhaparov or the Commonwealth of Independent States (CIS) summit which is due to be attended by Russian President Vladimir Putin and the leaders of Azerbaijan and other former Soviet republics. A senior aide to Putin suggested late last week that the Armenia premier will take part in the meeting via video link.

Another Russian official, Deputy Foreign Minister Mikhail Galuzin, said on Monday that Foreign Minister Sergei Lavrov hopes to hold trilateral talks with his Armenian and Azerbaijani counterparts in Bishkek on Thursday.

However, the Armenian Foreign Ministry said later in the day that Foreign Minister Ararat Mirzoyan will not join a meeting of the top diplomats of CIS countries which will also take place in the Kyrgyz capital. Armenia will be represented at the meeting by one of Mirzoyan's deputies, it told



RFE/RL's Armenian Service.

In what may have been a related development, Galuzin met with the Armenian ambassador in Moscow, Vagharshak Harutiunyan, on Tuesday. The Russian Foreign Ministry said vaguely that they discussed "some topical issues of Russian-Armenian relations."

Those relations deteriorated further last month following what Moscow described as "a series of unfriendly steps" taken by Yerevan. The Russian Foreign Ministry accused Pashinyan on September 25 of seeking to ruin Russian-Armenian relations and reorient his country towards the West. Also, Putin and other Russian officials rejected the Armenian criticism of Russian peacekeepers' failure to prevent or stop Azerbaijan's September 19-20 military offensive in Nagorno-Karabakh that led to the mass exodus of the region's ethnic Armenian population.

## France Ready to Deliver Weapons to Armenia

Continued from page 1

exodus of more than 100,000 Armenians from Nagorno Karabakh, Colonna said during the Q&A session at the Senate.

"No matter how it tries to present the situation, Azerbaijan planned and organized the exodus of more than 100,000 Armenians from Nagorno-Karabakh. This serious crime cannot go unanswered," she emphasized.

The Foreign Minister said France will demand the adoption of a resolution within the framework of the UN Security Council that will create conditions for the return of Nagorno Karabakh Armenians.

The French Foreign Minister stressed the need to protect the historical and cultural rights of the Armenians of Nagorno Karabakh and insisted on permanent international presence in the region.

## Ukrainian Flag Removed from French Vienne City Hall After Zelensky Thanks Aliyev for Aid



VIENNE, FRANCE -- Mayor of the French city of Thierry Kovacs has ordered the removal of the Ukrainian flag from the pediment of the administration building after Ukrainian President Vladimir Zelensky's statement about cooperation with Azerbaijan, Dauphiné libéré reports.

"You cannot refer to Western values and on this basis call on the West for help, while sharing the vision of the regime - the initiator of ethnic cleansing in Nagorno-Karabakh. This form of support for the Azerbaijani dictator is unacceptable. The removal (of the flag. — Ed.) does not in any way detract from the support that Vienne provides to the Ukrainian people," the publication quotes the mayor as saying.

Zelensky said in a tweet on October 4 that he had a call with Aliyev and thanked him for Azerbaijan's "significant humanitarian assistance, particularly in the energy sector as winter

approaches."

According to Kovacs, one cannot thank Baku for humanitarian aid, particularly in the energy sector, while Azerbaijan "sells gas at one and a half times the price to finance its military efforts against Armenia."

On September 19, Azerbaijan launched a military offensive against Nagorno-Karabakh, which left hundreds of Armenians killed and thousands of others displaced. On September 20, the authorities of Nagorno-Karabakh agreed to a ceasefire on Azerbaijan's terms, including the dissolution of the Defense Army. On September 18, President of the Republic of Artsakh Samvel Shahramanyan signed a decree, according to which the Republic of Nagorno-Karabakh (Artsakh) will cease to exist by January 1, 2024. As of 1 October, 100,625 displaced residents have already fled Nagorno-Karabakh and reached Armenia.

## Kristine Grigoryan Named Armenia's First Foreign Intelligence Chief


YEREVAN -- Prime Minister Nikol Pashinyan has appointed Armenia's former human rights ombudswoman, Kristine Grigoryan, as the first head of Foreign Intelligence Service formally set up by his government about a year ago.

Armenia already had intelligence services operating within its National Security Service (NSS) and military when the National Assembly approved last December the creation of the Foreign Intelligence Service (FIS). The NSS division is supposed to be fully replaced by the FIS within three years.

"The main task of the service is to forecast opportunities and external threats to the state and society and to provide political decision-makers with reliable, credible intelligence information about them," PM's press secretary, Nazeli Baghdasaryan told the Armenpress news agency following Grigoryan's appointment announced on Wednesday.

Grigoryan unexpectedly resigned as ombudswoman in January after less than a year in office. She said at the time that she is planning to move on to another job.

The 42-year-old lawyer, who has never worked for security agencies before, has not been seen in public since then. A senior pro-government lawmaker, Gagik Melkonyan con-



firmed rumors that she underwent relevant training before taking up her new post.

"She has been trained but I don't know where," Melkonyan told the Hraparak daily. "She came back and got appointed."

Citing another, unnamed source, the paper claimed that Grigoryan was trained by "Western intelligence services." It noted that the chief of Britain's foreign intelligence agency, Richard Moore, visited Yerevan and met with Pashinyan just days before the Armenian government pushed a bill on the FIS through the parliament. U.S. Central Intelligence Agency Director William Burns visited Armenia in July 2022.



## A Democratic Nation Has Been Allowed to Die



**GEOFFRY ROBERTSON**  
UN War Judge and Author

It happened quickly, the final invasion, and with hundreds of Orthodox Christians killed by the aggressors. Armenia, led by a one-time human rights lawyer, had no alternative but to save thousands of its people from death by surrendering their enclave at Nagorno-Karabakh to the brutal forces of Ilham Aliyev, dictator of Azerbaijan.

It was Russia, once again, that was principally to blame: it was given by a foolish UN Security Council the duty to keep the peace, but when Armenia condemned the invasion of Ukraine, Putin in revenge withdrew all protection of Nagorno-Karabakh and let the Azerbaijan army off its leash.

120,000 citizens are now at its mercy, being forced either to abandon their ancestral homes or else live under a tyranny that has fomented hatred against them for many years.

Nagorno-Karabakh is a small, mountainous country in the clouds,

settled by Armenians for many centuries. It was the first in 301 AD to adopt Christianity.

Hundreds of Orthodox churches, and their ancient mysterious tombstones (many now defaced or demolished by the aggressors), attract visitors from Yerevan, Armenia's capital, who take the 6 hour road trek via Mount Ararat to Stepanakert, centre of the Karabakh's democracy that was this week snuffed out. The trip is only 20 minutes by air from a modern airport. But planes have not flown for years because the Azeri government threatens to shoot them down. The country fell to Russia in the early nineteenth century, and the demographic evidence from the first census of that time proves that it was all-Armenian and the area should have been allocated to this state when Stalin divided the territory in 1920. Instead, he gave it to Azerbaijan, and the mistake was not rectified until a civil war after the collapse of the USSR. The Armenians of Nagorno-Karabakh – still the great majority of the population – voted first to join with Armenia (the

wise course) but then (courageously as they thought) opted for independence. The war had commenced with pogroms by Azeris in Sumgait and Baku. But in time a local Karabakh defence force took the upper hand. Fighting was brutal. With ethnic hate on both sides. The siege of Stepanakert during which Azeri forces killed several thousand in bombings of schools and hospitals, was Guernica writ small. The people only survived because of supplies brought on a narrow road - a humanitarian corridor - from Armenia, which Azerbaijan closed earlier this year.

Nagorno-Karabakh won the war by 1994 and declared, like Kosovo, its right to self-determination. For the next quarter-century it governed itself with help from Armenia. It did so, reasonably enough, with fair elections and democratic institutions like an independent judiciary - as I found when investigating the situation in the country for a court case in 2014. It was not, as many news reporters said last week, a country of "Armenian separatists" but of an Armenian people whose ancestors had lived in these highlands for centuries and who had fought for, and won, for a quarter of a century, the right to resist a brutal dictator. But there were many Azeri provocations at the border - the "line of control".

The Security Council, quite absurdly, entrusted the enclave security to Russia which did not take its duties seriously and in 2020 the war broke out again. Armenia voted at the UN to condemn Russia for attacking Ukraine and in consequence Putin determined to end all support for it and to take revenge. The last straw came this month, when Armenia joined the International Criminal Court (ICC) which is prosecuting Putin for kidnapping

Ukrainian children. Last week the Kremlin carpeted the Armenian ambassador and made what it described as a "harsh protest": it threatened to withdraw its security mandated protection for Nagorno-Karabakh. When it did so, Azerbaijan invaded.

How should the UK react? Aliyev, like Putin, is guilty of the international crime of aggression, and this country should denounce this violation. Russia, too, should be condemned for betraying the duty imposed on it by the Security Council. We should certainly offer to take some of the many thousands of refugees: they are innocent victims of an international double-cross. They have every reason to fear persecution if they stay where they belong. Their political leaders are already being arrested.

As for the United Nations, Nagorno-Karabakh will be remembered as yet another reason why it is no longer fit for purpose. That purpose, its Charter reminds us, is to "save succeeding generations from the scourge of war," yet it cannot expel Russia (even were Putin to use nuclear weapons) which would veto its own expulsion, and it cannot even expel Azerbaijan for aggression (because Russia would veto the necessary Security Council recommendation).

The only way forward is to replace the United Nations, because its Security Council is not fit for purpose. It is incapable of reform, because Russia and China will veto reform. "Security" will only come from an international representative body with the moral, military, economic power to deter authoritarian aggression.

Geoffrey Robertson AO KC is a former UN war crimes judge and author of *An Inconvenient Genocide: Who Now Remembers the Armenians?*  
The Telegraph

## Artsakh, USC, and LA Times

LOS ANGELES — Last week, nearly the entire population of 120,000 Armenians was forcefully expelled from their ancestral homeland of Artsakh (Nagorno-Karabakh).

On September 19, after an inhumane nine-month blockade, which brought the people of Artsakh to the brink of starvation, Azerbaijan launched a full-scale military assault on the civilian population. After thirty years of democratic self-rule under constant physical and psychological violence, the population of the Republic of Artsakh was expelled and the elected authorities were compelled to announce that it will cease to exist.

In this most critical time, the USC Annenberg School for Communication and Journalism hosted the Turkish Ambassador to the United States, with the Consul General of Azerbaijan in attendance, at a conference highlighting the role of public diplomacy in Turkish foreign policy.


Given that strategizing and implementing violence against the Armenians of Armenia and Artsakh is part of that foreign policy, USC's Armenian students and members of the community exercised their freedom of speech and freedom of assembly to call attention to the inappropriate timing and purpose of this event.



Despite efforts by the Institute, the USC Armenian Students' Association, faculty, Armenian Studies scholars, donors, and the general public, USC Annenberg chose to move forward with the event. Student protestors were met with excessive force and removed from the event. Equally shocking was the refusal to allow entry to members of USC's Armenian community.

As we work to live up to the intellectual and moral responsibility of being an Armenian Studies institution at this time, we will continue to support the efforts to educate all those who wish to understand and to encourage further scholarship into this increasingly complex situation.

## Armenia to Host 2024 World Congress on Innovation and Technology



YEREVAN -- Armenia, the next host of World Congress on Innovation and Technology (WCIT) in 2024. The WCIT 2024 cup was handed over to Armenia in the Malaysian state of Sarawak, the Union of Advanced Technology Enterprises informs.

WCIT 2023 featured more than 10,000 participants from 46 countries, bringing together world leaders, technology innovators, and discovering the potential of innovation and technology around the world.

"The success of WCIT 2019 and the partnership of UATE with WITSA will continue as Armenia has won the bid to host the next WCIT and won the privilege to host the event again," UATE said in a statement.

WCIT is held by the World Information Technology and Services Alli-

ance (WITSA), which brings together 80 countries. WITSA's vision is to make digital technologies and the digital economy a new strategic pillar for global economies, promoting the value of digital transformation as a catalyst for economic growth and social prosperity. WITSA has also announced its intention to support mutually beneficial trade agreements and raise awareness of competitive advantages in digital technologies.

The theme of WCIT 2024 is "Science as a way to fulfill the promise of the digital age." This focus highlights Armenia's commitment to harnessing scientific advances to embrace the full potential of the digital age. "This is another new victory for Armenia's IT industry and another opportunity to show the world what makes us a "new center."

## Akian Family Gifts \$9 Million to Name New Science & Engineering Building at AUA



YEREVAN -- The generosity of the Akian family toward the advancement of the American University of Armenia (AUA) knows no bounds. AUA benefactors and Pillars Zaven P. and Sonia Akian have been involved with AUA for decades, pouring their time, efforts, and financial resources to ensure that the University remains at the forefront of academic excellence in Armenia and the region. From AUA's commensurate naming of the Zaven P. and Sonia Akian College of Science & Engineering to the recent establishment of the Akian BioScience Laboratory, in that same vein, the Akians recently announced a transformational \$9 million gift to name the new AUA Science & Engineering building.

"Zaven P. and Sonia Akian's support of the University has reached far and helped numerous bright students realize their dreams of obtaining an AUA education. But their contribution goes beyond supporting students — they are investors in the future of Armenia," expounds Vice President of Development Gaiane Khachatryan.

As part of the Build a Better Future with AUA capital campaign, the University is seeking to accelerate progress and innovation where sci-

ence, technology, and engineering play a transformative role bridged with the humanities, social sciences, and arts. To accommodate the doubled enrollment projected within the next five years, the University is rapidly expanding its campus. The new Science & Engineering building, to be named the Akian Family Building, will be part of a complex of structures, including a Humanities & Social Science building and a separate Arts building. The latter two will be named the Edward & Pamela Avedisian Building and Paruyr Sevak Building, respectively, perpetuating the most recent capital gift by the Avedisian family.

All three new buildings will be connected through an atrium, named the Founders' Atrium, which will provide a meeting space for users of all three, with separate entrances into each building. The Akian Family Building is expected to measure approximately 80,000 square feet of usable space and will include space for research and experimentation in physical sciences and biophysics, in addition to classrooms, offices, auditoriums, and other intended uses. It is anticipated that the Building will be ready for occupancy by Fall 2027.

## UN Appealing for \$97 Million

Continued from page 1

volunteers and civil society, has also been equally remarkable."

The Armenia emergency refugee response plan brings together 60 partners, including 43 national NGOs, and covers relief efforts for a six-month period, until the end of March 2024.

The joint plan aims to support some 231,000 people including 136,000 refugees and 95,000 members of local host communities. The plan also takes into account the upcoming, harsh winter months.

Among new arrivals, are some 30,000 children and many vulnerable people, including pregnant women, those with disabilities, and others with chronic health conditions. More than half of the refugees are older people and children.

Many fled with just the few possessions they were able to grab and arrived distressed, exhausted, and apprehensive about the future. They now require critical support, according to UN agencies.

Having to absorb more than 100,000 refugees in a matter of days, there is immense pressure on the host community in Armenia and on existing national services. Refugee arrivals represent over 3.4 per cent of the country's population and are in addition to a pre-existing refugee, asylum seeker, and stateless population of some 35,000 people.

The response plan will support and complement the Government response, with an emphasis on emergency protection and assistance, while at the same time focusing on inclusion, resilience, and solutions from the start, reaching both refugees and the host communities, according to UNHCR.

The plan covers multiple sectors, notably protection, with a focus on gender-based violence, child protection, education, food security, nutrition, health, resilience, shelter, and non-food items. A longer-term focus will aim to ensure inclusion and the strengthening of national public services.

## Prof. Barlow Der Mugrdechian and Summer Study Program Participants to speak on "Armenian Summer Study Program 2023"



FRESNO -- Prof. Barlow Der Mugrdechian and Summer Study Program Participants to speak on "Armenian Summer Study Program 2023: Reflections"

Berberian Coordinator of Armenian Studies Prof. Barlow Der Mugrdechian and student participants of the Summer Study Program will speak on "Armenian Summer Study Program 2023: Reflections" at 7:00PM on Friday, October 13, 2023, in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191. The presentation is part of the Fall Lecture Series of the Armenian Studies Program.

Professors Barlow Der Mugrdechian led a group of eleven Fresno State students on the Armenia Summer Study Program, May 23-June 8, 2023. While in Armenia students visited the major cultural and religious sites in Armenia, including visits to Holy Etchmiadzin, the Armenian Mar-

tyrs Monument, and the Matenadaran. A visit to Mer Hooys-House of Hope, a home of disadvantaged girls was especially meaningful. There were many of these unforgettable experiences during the trip.

The group will share its reflections of some of the most memorable moments through videos and photographs. They will discuss the lasting impact of the Summer Study trip to Armenia.

The lecture is free and open to the public. Parking is free in Fresno State Lots P5 and P6, near the University Business Center, 5245 N. Backer Ave., Fresno State.

The presentation will be live streamed at: <https://bit.ly/armenianstudiesyoutube>.

For more information about the lecture please contact the Armenian Studies Program at 278-2669, or visit our website at [www.fresnostate.edu/armenianstudies](http://www.fresnostate.edu/armenianstudies).

## European Leaders Voice

Continued from page 1

aid to the refugees shortly after the mass exodus of Karabakh's Armenian population resulting from Azerbaijan's September 19-20 offensive. Ursula von der Leyen, the head of the European Commission, said earlier on Thursday that the EU's executive body will double that sum in addition to giving the Armenian government 15 million euros in "direct budgetary support." Von der Leyen held a separate meeting with

Pashinyan in Granada.

Michel, Macron and Scholz called for the "strict adherence to the principle of non-use of force and threat of use of force."

The European leaders clearly backed Yerevan's stance during the Granada talks. Their joint statement cited the "urgent need to work towards border delimitation based on the most recent USSR General Staff maps that have been provided to the sides."



**MEHER BABIAN, D.D.S.**  
General Dentistry

Տոթթ․ Մհեր Պապեան  
Ատամնարկոժ

1111 S. Glendale Ave., Suite 206  
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884  
Fax: (818) 547-9360

### Ալֆորվիլի Մեջ Արցախահայութեան Զօրակցութեան Նուիրուած Հաւաք



Շաբաթ, 30 Սեպտեմբեր 2023-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Ալֆորվիլի «Բոք» սրահին մէջ տեղի ունեցաւ արցախահայութեան զօրակցութեան նուիրուած հաւաք մը:

Հաւաքը կազմակերպուած էր Ալֆորվիլի Քաղաքապետական խորհուրդին կողմէ: Ներկայ էին Ալֆորվիլի քաղաքապետ Լիւք Քարվոնաս, ծերակուտականներ Լորանս Ռոսինիոլ, Փիեռ Ուզուլիաս, Աբլի Մելլուլի, երես փոխան Իգապէլ Սանթրակո, Արցախի ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեան, Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչներ, Քաղաքապետական խորհուրդի անդամներ՝ Տեպորա Զապունեան, Մարո Գապայեան, Սարո Մարտիրեան, Կարո Խաչիկեան, Գրիգոր Քոսթիքեան, CCAF-ի նախագահ Մուրատ Փափազեան, ինչպէս նաեւ սրահը լեցուցած հայ եւ օտար ներկաներ:

Կոչ ուղղելով ֆրանսական իշխանութիւններուն՝ Քարվոնաս ըսաւ, որ Ֆրանսան պէտք է անմիջապէս միջազգային աստիճանի վրայ հնչեցնէ:

Իր խօսքին մէջ Լիւք Քարվոնաս կոչ ուղղեց մեծ թիւերով մասնակցելու Հոկտեմբեր 1-ի Պրիւքսէլի մէջ կայանալիք համաեւրոպական ցոյցին, ինչպէս նաեւ պատրաստակամութիւն յայտնեց Ալֆորվիլի մէջ ընդունելու արցախահայ ընտանիքներ:

Ապա, խօսք առաւ Արցախի ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեանը, որ շնորհակալութիւն յայտնեց հաւաքը կազմակերպողներուն եւ բոլոր անոնց, որոնք Արցախի կողքին են թէ՛ ուրախ, թէ՛ տխուր օրերուն:

Խօսք առաւ Իգապէլ Սանթրակոն ու դատապարտեց Ատրպէյջանի անընդունելի զինուորական գործողութիւնները Արցախի բնակչութեան հանդէպ, կոչ ուղղելով



Առաջին հերթին սփռուեցաւ քաղաքապետարանին կողմէ պատրաստուած տեսերիդ մը, ուր կը ներկայացուէր վերջին տասնամեակներուն Ալֆորվիլի հայ-ֆրանսական յարաբերութիւնները եւ յատկապէս Արցախի հետ գործակցութեան տարբեր փուլերը:

Խօսք առաւ Ալֆորվիլի քաղաքապետ Լիւք Քարվոնասը, որ անդրադարձաւ Արցախի եւ արցախահայութեան ներկայ ողբերգական վիճակին եւ ըսաւ, որ Ատրպէյջանի ռազմական գործողութիւնները մտահոգիչ նախընթաց են, եւ անոնց անուղղակիօրէն մասնակից են մեծ թիւով եւրոպացիներ, որոնք լուր կը մնան եւ չեն սաստեր եւրոպական չափանիշներուն հակադրուող այս արարքները:

Ապա, զգուշացուց, որ եթէ առաջը չառնուի՝ նոյնպիսի գործողութիւններ կրնան ուղղուիլ Հայաստանի դէմ:

չլուելու ի տես այս ցեղասպանութեան, եւ չընդունելու, որ ատրպէյջանական կազմաւորումները, քան հայ մանուկներուն սիրտերը, խոստանալով ֆրանսական եւ եւրոպական խորհրդարաններէն ներս լսելի դարձնել արցախահայութեան ձայնը:

Իր կարգին, Լորանս Ռոսինիոլ ըսաւ. «Շատ կ'ուզէի ձեր հետ առաջին հանդիպումս ըլլար աւելի լաւ ուրախ եւ նպաստաւոր պայմաններու մէջ, սակայն այսօր կը գտնուինք շատ դժուարին կացութեան մը առջեւ, գիտակցելով այն դժուարութիւնները, որոնց կրնայ հանդիպուիլ տեղահանուած ժողովուրդ մը: Պիտի աշխատիմ ամէն գնով մարդասիրական եւ նիւթական օժանդակութիւններ ուղարկելու ծրագիրներ յաջողցնել»:

Աբլի Մելլուլի ըսաւ, որ ամէն

### «Հայորդիք»-ը Հայկական Մշակոյթն Օտար Երկրում Պահպանելու Լաւագոյն Հարթակ



«Հայորդիք» երգի եւ պարի անսամպլը շուրջ 25 տարի օտար երկրում ապրող հայ երեխաներին, դեռահասներին ու պատանիներին հնարաւորութիւն է տալիս ճանաչել սեփական արմատները, սիրել հայրենիքը՝ հայկական մշակոյթը ճանաչելու, այն սերտելու եւ աշխարհին ներկայացնելու միջոցով:

«Հայորդիք»-ն առաջնորդուում է հետեւեալ կարգաթուով. «Խօսել տարբեր լեզուներով մեարդատաւ հայերէնից յետոյ, սովորել աշխարհի ժողովուրդների երգերը կոմիտասեան երգերից յետոյ, քոչարիից եւ եարխուշտայից յետոյ պարել աշխարհի ժողովուրդների պարերը»:

Անսամպլի յօբելեանի առթիւ «Արմենպրես»-ի թղթակիցը գրուցել է «Հայորդիք»-ի հիմնադիր եւ գեղարուեստական ղեկավար, ազգային երգերի կատարող, պարուհի Անահիտ Սարգսեանի հետ: Նա չի շուրջ 1998 թուականին ճակատագրի բերումով տեղափոխուել է Մոսկու: Լինելով նահապետական հայեցողների տէր ընտանիքից՝ հասկացել է, որ չի կարող առանց հայաշունչ միջավայրի, շրջապատի:

Անսամպլի գաղափարն աւելի է ամրապնդուել, երբ Անահիտ Սարգսեանի քրոջ երեխաները, որոնք սովորել են ռուսական դպրոցում, մի օր ասել են՝ ամաչում են հայ լինելուց: Այդ արտայայտութիւնը Սարգսեանի համար ճակատագրական է եղել: Նա գիտակցել է, որ օտար հողում ապրող հայ երեխաները բաւարար գիտելիքներ չունեն հայոց պատմութիւնից, հայ մշակոյթից, ինչի պատճառով ամաչում են եւ եթէ նրանք գիտուեն գիտելիքով, այդպէս չի լինի:

Հենց այդ պատճառով տարիների ընթացքում «Հայորդիք»-ը երգի եւ պարի անսամպլից վերածուել է մշակութային կեդրոնի, որտեղ դասաւանդում են հայոց լեզու, հայ նուագարաններ, երգ ու պար: «Մենք կախում չունենք ոչ ոքից, երբեք չենք ունեցել: Համագործակցում ենք հայ համայնքի հետ, դեսպանատանը կից մշակութային կեդրոնի հետ, իւրաքանչիւրի հետ, ով ցանկանում է ներկայացնել հայի տեսակը, մշակոյթը: Եթէ չկայ մշակոյթ, չկայ ազգ եւ մշակոյթն ու գիտութիւնն են բնորոշում ազգի կերպարը, մշակոյթով է պայմանաւորուած երկրի, պետութեան զարգացումը», - հաւաստիացնում է Սարգսեանը:

Ըստ նրա՝ հայ երեխան, աշխարհի որ ծայրում էլ ապրի, պէտք է թումանեանին տարբերի թա-

մանեանից, ճանաչի հայ պոէտներին, Հայաստանի մասին պատմական կարեւորագոյն փաստերն իմանայ, ինչի շնորհիւ Հայաստան գալով իրեն օտար չի զգայ:

«Հայ երեխաներն այժմ ասում են՝ հպարտ են, որ հայ են, ես էլ յաճախ եմ կրկնում, որ Ռուսաստանը բազմազգ երկիր է. եթէ ձեզ հարցնեն, թէ ինչու էք հպարտ, պէտք է ունենաք բացատրութիւնը: Մենք փորձում ենք մեր մշակոյթի կեդրոնի միջոցով մոսկուայաբնակ երեխաներին փոխանցել ամենահիմնարար ու անհրաժեշտ գիտելիքները», - ընդգծում է Սարգսեանը:


Նրա խօսքով՝ շատ հայ երեխաներ հասկանում են հայերէն, բայց չեն խօսում, իսկ նրանց երեխաները չեն էլ հասկանայ հայերէն, ըստի «Հայորդիք» կեդրոնում ընդունելութիւնը սկսում է 4 տարեկանից: Կեդրոնը մասնաճիւղեր ունի Մոսկուայում եւ մերձմոսկովեան քաղաքներում:

«Հայորդիք»-ի գործունէութիւնն առաւել հետաքրքիր դարձնելու, հայկական երգն ու պարը նաեւ օտարներին ճանաչելի դարձնելու նպատակով 2011 թուականին Անահիտ Սարգսեանը նախաձեռնել է նաեւ «Հայորդիք» հայկական ժողովրդական պարերի մրցոյթփառատօնը, որը միջազգային է: Տարբեր ազգերի ներկայացուցիչները մրցութային օրը ներկայանում են հայկական պարով:

Նա չափազանց մեծ ուշադրութիւն է դարձնում ժիւրիի կազմին, որում ընդգրկուում են միջազգային հարթակներում լայն ճանաչում ստացած բարձրակարգ մասնագէտներ ինչպէս արտերկրից, այնպէս էլ Հայաստանից: «Մրցոյթփառատօնը միտուած է առողջ մթնոլորտում առողջ մրցակցութեան ապահովմանը, որովհետեւ ետնաբեմում 400 կամ 500 պարող երեխաներ են տարբեր երկրներից: Նրանք հաղորդակցուում են, սովորում իրարից», - ընդգծում է «Հայորդիք»-ի հիմնադիրը:

Տարիների յաջող ու արդիւնաւէտ աշխատանքը ցոյց է տալիս, որ Անահիտ Սարգսեանը ճիշտ ուղի է ընտրել: Նա «Հայորդիք»-ը մեծ ընտանիք է համարում, քանի որ անգամ այն սաները, որոնք այլեւս անսամպլում կամ կեդրոնում չեն, երբեք չեն մոռանում «Հայորդիք»-ը, իրենց երեխաներին են յետագայում բերում «Հայորդիք», որտեղ ընտանիքներ են ստեղծում: ԱՆԺԵԼԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Լուսանկարը՝ «Հայորդիք» անսամպլի «Փէսյպուլ»-ի էջից

### Պիւտճէ 2024. Հայաստանի Ռազմական Ծախսերն Ատրպէյճանին Կը Զիջեն 2.7 Անգամ



Յաջորդ տարի պաշտպանական ոլորտը դժուար կը լինի ՀՀ կառավարութեան առաջնահերթութիւն համարել, դա է փաստում 2024 թուականի պիւտճէի նախագիծը, որն արժանացել է գործադիրի հաւանութեանը եւ ուղարկուել Ազգային ժողով:


Ըստ պիւտճէի նախագծի՝ պաշտպանութեան (ուսումնական) ոլորտին յատկացուելիք գումարների աճը զգալիօրէն զիջում է թէ՛ 2023 թ-ի ցուցանիշին, թէ՛ այլ ոլորտների ծախսերի աճին:

Կառավարութիւնը ծրագրել է պաշտպանութեան նախարարութեանը 2024 թ.-ին յատկացնել 555.0 մլրդ դրամ (մօտ 1.4 մլրդ. տոլար): Սա 2023 թ.-ի հաստատուած պիւտճէի համեմատ աւելի է 37.7 մլրդ. դրամով կամ 7.3 %-ով: Մինչդեռ, նախորդ տարի 2023-ի

րի սահմանուած պաշարների մակարդակի, զէնքի եւ զինամթերքի հնարաւոր ներհանրապետական գնումների, բանակի մարտունակութեան եւ կենսապահովման պահանջների բաւարարմանը:

Հայաստանի եւ Ատրպէյճանի ուսումնական ծախսերի անջրպետը յաջորդ տարի կը խորանայ, եւ Հայաստանը կը զիջի 2.7 անգամ: Ատրպէյճանի ուսումնական ծախսերը 2024 թ.-ին կազմելու են մօտ 3.78 մլրդ. տոլար (2023-ի համեմատ աճը՝ 6 %) կամ պիւտճէի ընդհանուր ծախսերի 17.7%: Սա գերազանցում է 2015 թ.-ի պատմական առաւելագոյնը՝ 3.4 մլրդ. տոլար:

Հայաստանի եւ Ատրպէյճանի ուսումնական ծախսերը վերջին 10 տարուամ (միլիարդ, ԱՄՆ տոլար): ՀՀ ֆինանսների նախարար-



համար պաշտպանական ծախսերը 2022-ի համեմատ աւելացուել էին 162 մլրդ. դրամով կամ 46.7%-ով, որը 2023-ի պիւտճէից յատկացուող գումարների ամենամեծ աճն էր:

Ընդ որում՝ 2023թ.-ի համեմատ 2024-ին 1.3 %-ով նուազել է նաեւ պիւտճէի ամբողջ ծախսերի մէջ պաշտպանական ոլորտի ծախսերի մասը՝ 19.7 %-ից դառնալով 18.4 %: Թէ ինչու է սա պայմանաւորուած, կառավարութեան նիստում պիւտճէի ներկայացման ժամանակ որեւէ անդրադարձ չեղաւ:

Այդ 555 մլրդից 549.9 մլրդ. դրամը կ'ուղղուի Հայաստանի պաշտպանութեան ապահովմանը՝ ՀՀ զինուած ուժերի պահպանման, ուսումնական, մարտական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, կապի համակարգի սարքաւորումների, զօրանոցային եւ տեխնիկական գոյքի, պարենի, հանդերձանքի, վառելիքա-քսուքային նիւթե-


րութեան մշակած փաստաթղթում պետական պիւտճէի 2024 թ.-ի ընդհանուր ծախսերը պլանաւորուել են 3 դրլն. 17.4 մլրդ. դրամ, այդ թւում՝ ընթացիկ ծախսերը՝ 2 դրլն. 322.1 մլրդ. դրամ, կապիտալ ծախսերը՝ 695.3 մլրդ. դրամ: Յաջորդ տարուակ ծախսերը 2023թ.-ի ճշտուած պիւտճէի նոյն ցուցանիշը կը գերազանցեն մօտ 415 մլրդ. դրամով կամ 15.9 %-ով, կապիտալ ծախսերը՝ 126 մլրդ. դրամով կամ 22 %-ով:

ՀՀ պետական պիւտճէի ծախսերը 2019-2024 թթ. (տրիլիոն, ՀՀ դրամ)

2024թ. պետական պիւտճէով նախատեսուել է 2 տրլն. 676.1 մլրդ. դրամ եկամուտներ, որից հարկային եկամուտների գծով՝ 2 տրլն. 566.4 մլրդ. դրամ, հարկեր/ՀՆԱ յարաբերակցութիւնը կը կազ-

Շար.ը էջ 15

### Հոռմի Ստատուտը Չափազանց Կարեւոր Պաշտպանական Շերտ է



#### ԱՐՄԷՆ ԽԱՌԱՏԵԱՆ

Հոկտեմբերի 3-ին ՀՀ Ազգային ժողովը ամբողջութեամբ վաւերացրել է Հոռմի ստատուտը: Թէ ինչ է սա նշանակում մեզ համար, կը փորձեմ պարզաբանել ստորեւ, մինչ այդ չիշեցնեմ դրա նախապատմութիւնը:

Հոռմի ստատուտը միջպետական պայմանագիր է: Այն ընդունուել է 1998-ին Հոռումում եւ հիմք դրել ՄԱԿ-ի միջազգային քրէական դատարանի ստեղծմանը:

Պայմանագիրն ու Դատարանը ուժի մէջ են մտել եւ գործարկուել 2002-ին: Այս պահին Ստատուտի մաս է կազմում աշխարհի 123 երկիր:

Հիմա՝ ինչ է սա նշանակում մեզ համար, եւ ինչու է այն կարեւոր: Այս պահից սկսած, իսկ իրականում դեռեւս 2021-ից, երբ Հայաստանը ՄԱԿ-ին պաշտօնական նամակով տեղեկացրել է Ստատուտը ազգային մակարդակում ամբողջութեամբ վաւերացնելու մտադրութեան մա-

սին, մեր պետութեան եւ քաղաքացիների դէմ իրականացուած ուսումնական եւ այլ յանցագործութիւնները կարող են եւ քննուելու են ՄԱԿ-ի միջազգային քրէական դատարանում:

Մարդկութեան դէմ յանցագործութիւնները, ցեղասպանութիւններն ու էթնիկ զտումները կանխարգելելու եւ պատժելու գործառնությունով օժտուած միջազգային այս բարձրագոյն մարմինն լիբրաւ անդամակցելով՝ Հայաստանը, մի կողմից, ստանում է լրացուցիչ պաշտպանութիւն, միւս կողմից՝ յատկապէս վերջին տարիների ընթացքում Ատրպէյճանի կողմից իրականացուած ոճիրները Հաագա տանելու յստակ կարողութիւն եւ հնարաւորութիւն:

Քանի որ վլադիմիր Փութինի վերաբերեալ այս տարի Հաագայի դատարանի վճռից յետոյ Ռուսաստանն ու Հայաստանում այդ երկրի շահերն անթաքոյց պաշտպանող որոշ խմբեր շարունակում են կեղծ նարա-

Շար.ը էջ 15



### Արեւմտեան Թեմի Կրթութեան Օճախները՝ Շաբաթօրեայ Դպրոցները



ԴՊԿՏ. ԷԼԼԻ Է. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Արեւմտեան Թեմն ունի շուրջ քսան շաբաթօրեայ դպրոց Գալիֆորնիայի տարբեր քաղաքներում, Օրեկոնում, Լաս Վեկասում, Ուաշինկթոնում եւ Արիզոնայում, որտեղ սփիւռքահայ երիտասարդ սերունդին է փոխանցուած մեր լեզուն, կրօնը, պատմութիւնը, մշակոյթը, երգը, պարը, մեր ազգային արժէքները եւ հայրենասիրութեան առաքելութիւնը, որպէսզի մշտաբար պահուի ազգային ինքնութեան յաւերժական կրակը: Այս աստուածահաճոյ, մեծ ծառայութիւնը իրագործուած է ԱՄՆ Արեւմտեան Թեմի բարեխնամ առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանի օրհնութեամբ՝ իրեն օգնական ունենալով Շաբաթօրեայ դպրոցների գիտակրթական խորհուրդը եւ յարակից մարմինները:

Թեմապատկան միօրեայ կրթարաններն առաջնորդուած են հայոց լեզուի, հայ գրականութեան, պատմութեան, կրօնի եւ մշակոյթի համապարփակ ուսումնական ծրագրով, որը հիմնուած է Գալիֆորնիա նահանգի կողմից սահմանուած լեզուների դասաւանդման չափանիշների վրայ: Ծրագրի օգտագործած աղբիւրներն են տեղական եւ հայրենական տպագրութեան հայերէնի ու հայ գրականութեան դասագրքերը, ինչպէս նաեւ հայոց պատմութեան, հայ մշակոյթի, հայրենագիտութեան եւ արդիական հարցերի շուրջ առկայ նիւթեր, այդ թւում նաեւ գիտարուեստի միջոցներ, հայկական կայքէջեր եւ զանազան տեսալսողական միջոցներ:

Ծրագիրն ընդգրկում է նաեւ աշակերտի լեզուի իմացութեան մակարդակը, տարիքային եւ հոգեբանական առանձնայատկութիւնները եւ սովորելու կարողութիւնները:

Շաբաթօրեայ դպրոցների հիմնական նպատակն է մեր մանուկներին տալ ամբողջական հայեցի կրթութիւն, որպէսզի նրանք կարողանան հաղորդակցուել մայրենի լեզուով, հասկանալ եւ գնահատել մեր պատմական եւ մշակութային արժէքները, ունենալ վեհ ազգային ինքնագիտակցութիւն, լինել հպարտ իրենց մայրենի լեզուով, հաւատքով, մշակոյթով եւ հայրենիքով: Հարկ է նշել, որ այս ամէնը կը նպաստի, որպէսզի աշակերտները ունենան նաեւ պատասխանատուութեան գիտակցութիւն հայ համայնքի, Մայր եկեղեցու, ապրած երկրի, Հայրենիքի հանդէպ, ինչպէս նաեւ՝ յարգանք այլ ժողովրդների եւ մշակոյթների նկատմամբ:

Մանկավարժական նոր մօտեցումներին ծանօթացնելու նպատակով, իւրաքանչիւր ուսումնական տարուայ սկզբին թեմական առաջնորդ Յովնան Սրբազանի գլխավորութեամբ գիտակրթական խորհուրդը կազմակերպում է հայերէնի ուսուցիչների վերապատրաստման ամենամեայ աշխատանիստեր, որտեղ մեր համայնքի մտաւորականների կողքին իրենց մասնակցութիւնն են բերել Հայաստանի Հանրապետութեան Լեզուի Պետական Կոմիտէի այդ ժամանակուայ տնօրէն, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Դաւիթ Գիւրջինեանը եւ ՀՊՄՀ Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամպլոնի վարիչ, Սփիւռք գիտաուսումնական կեդրոնի ղեկավար, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Սուրէն Դանիէլեանը:

Մեր համայնքներում հրճուանքի եւ հպարտութեան օրեր են շաբաթօրեայ դպրոցների կազմակերպած ոգեշունչ հանդէսները, որտեղ բեմերից հնչում են մեր ոսկեղնիկ մայրենին, մեր հանապարհօրեայ աղօթքը, գոյտրիկ եւ հայրենաշունչ բանաստեղծութիւնները, որտեղ մշտապէս ներկայ է մեր Բնօրրանը՝ իր Արցախ աշխարհով, հայ զինուորը, ազգային երգն ու պարը, բանաստեղծն ու երգահանը: Իրական հերոսութիւն է, որ հայ ուսուցիչը կարողացել է իր աշակերտներին հաղորդել հայրենասիրութեան վառ կրակը եւ սովորեցնել որ Հայ լինելը միայն գիտակցութիւն եւ պատկանելութիւն չէ, այլ նաեւ ինքնութիւն եւ հպարտութիւն:

Արեւմտեան Թեմի կրթական ձեռքբերումները քոյր թեմերին ծառայեցնելու նպատակով, ԱՄՆ Արեւմտեան, Արեւելեան եւ Գանատայի թեմերի միջեւ սկսել է գեղեցիկ համագործակցութիւն: Վերոնշեալ թեմերում գործող շուրջ 60 վարժարաններում համակարգուած գիտելիքների փոխանցումը կը նպաստի մայրենի լեզուի դասաւանդման որակի եւ ազգապահպանութեան ու հաւատքի ամրապնդման սրբազան առաքելութեանը:

Հարկ է նշել, որ մէկ գրութեամբ անկարելի է անրադատնալ շաբաթօրեայ վարժարաններում կատարուող ովկիանոսածաւալ աշխատանքներին, որովհետեւ բոլոր խօսքերից առաջ ամենացայտուն վկայութիւններն այն գիտելիքներն են, որոնք ամբարել ու օգտագործում են աշակերտները՝ դառնալով մեր երկրի վաղուայ գինուորն ու դեսպաններն ամբողջ

### Հայաստան Արցախ Ֆոնտը Անցեալ 34 Տարիներուն Աւելի Քան 1 Միլիառ Տոլարի Օժանդակութիւն Նուիրաբերած Է Հայրենիքին

Կլէնտէյլ, Քալիֆորնիոյ մէջ գործող, ոչ-եկամտաբեր Հայաստան Արցախ Ֆոնտը հասած է աննախընթաց նուաճումի մը, որ կը յատկանշուի անցեալ 34 տարիներուն Հայաստանին եւ Արցախին աւելի քան 1 միլիառ տոլար արժէքով մարդասիրական օժանդակութիւն յատկացուցած ըլլալով:

Ներկայիս, Հայաստան Արցախ Ֆոնտը կարգադրութիւններ կը կատարէ, որպէսզի կարենայ անյապաղ օգնութիւն հասցնել հայրենիքին՝ ուղղակիօրէն ի նպաստ Արցախէն բռնի տեղահանուած եւ Հայաստան ապաստանած աւելի քան 100,000 գաղթականներուն:

Այս տարուայ առաջին ինը ամիսներուն միայն, Հայաստան Արցախ Ֆոնտը \$34 միլիոնի դեղորայք ուղարկած է Հայաստան եւ Արցախ (\$30 միլիոն համարժէքը՝ Հայաստանին, \$4 միլիոնը՝ Արցախին):

Հայաստան Արցախ Ֆոնտի բժշկական բոլոր առաքումները պէտք է նախօրօք ստանան հաւանութիւնը Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան, որ կ'ընտրէ իր ուզած դեղերը, կը ճշդէ դեղերուն քանակն ու գործածութեան ընդունելի ժամկէտերը, եւ

ըստ այնմ ներածման արտօնութիւն կը շնորհէ:


1989-էն ի վեր, Հայաստան Արցախ Ֆոնտն ու գայն նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են աւելի քան 1 միլիառ տոլարի մարդասիրական օժանդակութիւն՝ մեծաւ մասամբ դեղորայք, 158 բեռնատար թռիչքներով եւ 2,566 ծովային արկղերով:

«Հայաստան Արցախ Ֆոնտին կանոնաւորաբար կ'առաջարկուի, բոլորովին անվճար կերպով, միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ», յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեան եւ շարունակեց՝ «Մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Ուրեմն կը քաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը ուղարկել Հայաստանի բոլոր բժշկական կեդրոններուն»:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին. հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900. իմէյլի հասցէ՝ sassoun@pacbell.net:

աշխարհում: Այս ամէնը Արեւմտեան Թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանին, Գիտակրթական խորհուրդի, բոլոր դպրոցների տնօրէնների եւ ուսուցիչների կատարած հայակերտման մեծ աշխատանքն է, որի պտուղները իւրօրինակ շնորհակա-

լութիւն եւ օրհնութիւն են մեզ համար: Այստեղ անմասն չեն նաեւ ծնողները, տատիկներն ու պապիկները, որոնք սատարում են Հայ Դպրոցին՝ որպէս մի կտոր հող եւ շունչ մեր Հայրենիքից, որի համար մշտապէս երախտապարտ ենք եւ յաւատ շնորհակալ:




Հովանաւորութեամբ՝

**Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝  
Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի**

Կազմակերպութեամբ՝

**Թեքեան Մշակութային Միութեան  
Չուարթնոց Մշակութային Յանձնախումբի  
Նոր Սերունդ Մշակութային Միութեան  
Հ.Բ.Ը.Միութեան Վեթերաններու Վարչութեան  
Գալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութեան**

---



## Շնորհանդէս ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳԱՆԻ, «ԻՆՔՍ ԻՆՁ ՀԵՏ» գիրքին


Գիրքը կը ներկայացնէ

**Տօքթ. ԳՐԻԳՈՐ ՍԻՍՈՆԵԱՆ**

Բեղիսակի գրական վաստակը կը ներկայացնէ

**Գրականագետ՝ ԼԻԼԻԹ ԶԷՅԵԱՆ**

---



**Գեղարուեստական Յայտագիր  
Հիւրասիրութիւն**

---

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 19 Հոկտեմբեր, 2023-ին,  
Երեկոյեան ժամը 7:30-ին, Առաջնորդարանի «Արմէն Համբար»  
սրահին մէջ: 3325 N GLENOAKS BLVD, CA 91504



### «Արսենալ» - «Մանչեսթեր Սիթի»՝ 1:0



Անգլիոյի Փրեմիեր Լիգայի առաջնութեան 8-րդ հանգրուանին փոխախօյեան «Արսենալը» Լոնտոնի մէջ ընդունեց ախոյեան «Մանչեսթեր Սիթիին» եւ յաղթանակի հասաւ 1:0 արդիւնքով:

Միակ կողմը 86-րդ վայրկեանին նշանակեց պրագիւցի յարձակող Կապրիէլ Մարտինելին:

«Արսենալ» 20 կէտով հաւասարեցաւ առաջատար «Թոթենհեմին» եւ երկրորդն է: «Մանչեսթեր Սիթիին» երրորդ տեղը կը գրաւէ՝ 18 կէտով:

### «Լիվերփուլ» Կորսնցուց Յաղթանակի Առիթը

Անգլիոյի առաջնութեան 8-րդ հանգրուանին «Լիվերփուլ» հիւրընկալեց «Պրայթօնին»: Խաղը աւարտեցաւ հաւասար՝ 2:2 արդիւնքով: «Լիվերփուլը» կողերը նշանակեց եզրագծի յարձակող Մոհամէտ Սալահը:

«Լիվերպուլը» 17 կէտով չորրորդն է: «Պրայթօն» 6-րդն է՝ 16 կէտ:

### «Չելսի» եւ «Մանչեսթեր Եունայթըտ» Յաղթական

Անգլիոյ առաջնութեան 8-րդ հանգրուանին «Մանչեսթեր Եունայթըտ» իր դաշտին վրայ մրցեցաւ «Պրենթֆորտի» հետ եւ յաղթեց 2:1 արդիւնքով Մանչեսթերեան խումբը 12 կէտով բարձրացաւ 10-րդ տեղ:

«Չելսին» հիւրընկալեց «Պարնլիին» եւ առաւելութեան հասաւ 4:1 արդիւնքով:

«Չելսին» 11 կէտով կը գրաւէ 1-րդ տեղը:

### Մատրիտի «Ռեալը» Յաղթեց 4:0 Արդիւնքով



Սպանիոյի առաջնութեան 9-րդ հանգրուանին Մատրիտի «Ռեալը» ընդունեց «Օսասունային» եւ յաղթեց 4:0 արդիւնքով:

Տուպի հեղինակ դարձաւ անգլիացի կիսապաշտպան Զուտ Պելլիսկեմը: Աչքի ինկան նաեւ պրագիւցի յարձակող Վինիսիուս Ժոնսոնը եւ սպանացի յարձակող Խոսելուս:

«Ռեալը» 24 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը կը գրաւէ «Ժիրոնան», որ 1:0 արդիւնքով յաղթեց «Քատիսին» եւ ունի 22 կէտ:

### «Պարսելոնան» Խուսափեցաւ Պարտութենէն 0:2-էն Յետոյ

Սպանիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» հիւրընկալեց «Կրանատային»: Սպանացի Չաւիի գլխաւորած խումբը բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 2:2:

«Կրանատային» տուպի հեղինակ դարձաւ սպանացի յարձակող Պրայեան Սարահոսան, որ խաղի հաշիւը բացաւ առաջին վայրկեանին, իսկ առաւելութիւնը կրկնապատեց 29-րդ վայրկեանին:

Առաջին խաղակէսի աւելացուած ժամանակին տարբերութիւնը կրճատեց քաթալոնական խումբի սպանացի յարձակող Լամին Եամալը: 86-րդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց սպանացի պաշտպան Սերխի Ռոպերթոն:

«Պարսելոնան» 21 կէտով երրորդն է: Առաջատար «Ռեալը» ունի 24 կէտ: Երկրորդ տեղը գտնուող «Ժիրոնան» ունի 22 կէտ:

### ԱԱ. Արթուր Դաւթեանը Գրաւեց 6-րդ Տեղը


Պելճիքայի Անտվերպ քաղաքին մէջ կատարուող մարմնամարզութեան աշխարհի առաջնութեան Հայաստանի առաջատար մարմնամարզիկ Արթուր Դաւթեանը 6-րդ տեղը գրաւեց հենացատկի վարժութեան մէջ:

Թոքիոյի Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր, 2022 թուականի աշխարհի ախոյեան, Եւրոպայի կրկնակի ախոյեան Արթուր Դաւթեանը երգափակիչին վաստակեցաւ 14.549 կէտ:

Դաւթեանը առաջին ցատկի ժամանակ սայթաքեցաւ: Մրցավարները առաջին ցատկը գնահատեցին 13.966 կէտ: Երկրորդ ցատկը աշխարհի ախոյեանը փայլուն կատարեց, բայց մրցավարները միջին գնահատականը տուին 14. 549 կէտ:

Դաւթեան ոտքի վնասուածքով կը մասնակցէր հենացատկի եզրափակիչին: Բազմամարտի ընթացքին որակաւորման փուլը յաղթահարած էր ամենաբարձր կէտով՝ 15.033:

Դաւթեան նուաճած է Փարիզ-2024-ի ողիմպիական ուղեգիր:



### Անհաւանական Համաշխարհային Մրցանիշ Մարաթոնեան Վազքի Մէջ

23-ամեայ քենիացի Քելվին Քրիպտոմը սահմանեց համաշխարհային մրցանիշ մարաթոնեան վազքի մէջ՝ 42 քմ եւ 195 մեթրը յաղթահարելով 2 ժամ եւ 35 երկվայրկեանի ընթացքին: Ան նուաճեց Շիքակոյի մարաթոնի տիտղոսը:

Նախորդ մրցանիշը կը պատկանէր քենիացի էլիոտու Կիպչոգէին եւ հաւասար էր 2 ժամ, 1 վայրկեան եւ 9 երկվայրկեանի:

Քելվին Քրիպտոմն այս տարի յաղթած էր նաեւ Լոնտոնի մարաթոնին:



### «Ինթեր» Կորսնցուց 2 Կուլի Առաւելութիւնը Եւ Բաւարարուեցաւ Հաւասար Արդիւնքով

Իտալիոյ առաջնութեան 8-րդ հանգրուանին Միլանի «Ինթերը» ընդունեց «Պոլոնիային» եւ կորսնցնելով երկու կուլի առաւելութիւնը բաւարարուեցաւ՝ 2:2 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ 77-րդ վայրկեանին:

«Ինթեր» 21 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:



### ՊՍԺ-ն Պարտութեան Մատնեց «Ռենին»

Ֆրանսայի առաջնութեան 8-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն հիւրընկալեց «Ռենին»: Սպանացի Լուիս Էնրիկէի գլխաւորած խումբը յաղթեց 3:1 արդիւնքով:

ՊՍԺ-ն վաստակած է 15 կէտ եւ երրորդն է: «Ռենը» 8-րդն է՝ 11 կէտ:

### «Ինթեր Մայամին» Մեսիի Հետ Պարտուեցաւ Եւ Ձրկուեցաւ Փլեյ-Օֆֆ Մասնակցելու Հնարաւորութենէն

Հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան հերթական խաղին «Ինթեր Մայամին» մրցեցաւ «Սինսինատիին» հետ եւ պարտութիւն կրեց 0:1 արդիւնքով:

«Ինթեր Մայամի» կազմէն 55-րդ վայրկեանին փոխարինման դաշտ մտաւ Լիոնել Մեսին, որ նախորդ չորս խաղուն չէր մասնակցած վնասուածքի պատճառով:

Արեւելեան քոնֆերանսի մէջ հանդէս «Ինթեր Մայամին» 32 խաղէն յետոյ 33 կէտով 14-րդ տեղը կը գրաւեց եւ զրկուեցաւ 1/16 եզրափակիչի ն մասնակցելու առիթէն:

